Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում բոլոր տիկնանց և օրիորդներին և շնորհավորում Կանանց տոնի՝ մարտի 8-ի առիթով:

Սիրելի մայրեր և քույրեր, մաղթում ենք, որ Փրկիչ Տերը մեր հավատի լույսը միշտ զորավոր պահի Ձեր հոգիներում և բարի իրականացման առաջնորդի Ձեր սրտի ազնիվ իղձերն ու ցանկությունները՝ հարանորոգ հաջողություններ պարգևելով Ձեր բոլոր գործերին ու ծրագրերին:

Թող Բարձյրալն Աստված խաղաղ ու ապահով պահպանի Հայրենի մեր երկիրը և զորավոր Իր Աջով միշտ ապավեն լինի մեր ժողովրդին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի:

8 մարտի 2008 թ.
Ս. Էջմիածին